

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

44 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՅԻՆ «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ, ԻՍԿ 20-ՈՒՄ ԿԱՆՅԿԱՅՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ



Հոկտեմբերի 2-ին Վրաստանի ողջ տարածքում (բացառությամբ՝ Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի բռնազավթված երկրամասերի) անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

Քաղաքացիներն ընտրել էին մունիցիպալիտետների 64 քաղաքապետների եւ մունիցիպալիտետների սակրեբուլոնների 1,388 պատգամավորների: Ընթացիկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, ընդհանուր առմամբ, մասնակցեց 43 կուսակցություն:

Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկությանը մասնակցությունը կազմել է ընտրական իրավունք ունեցողների 51,92 տոկոսը՝ 1,815,776 ընտրող կա-

տարել է քաղաքացիական պարտքը: Համեմատության համար նշենք, որ տեղական ինքնակառավարման մարմինների նախորդ ընտրություններին՝ 2017 թվականին, ընտրողների մասնակցությունը զգալիորեն ցածր էր՝ 45,65 տոկոս, իսկ 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ մասնակցության ակտիվությունը կազմեց 56,11 տոկոս: Նշենք, որ ընտրական օրենսգրքում կատարած փոփոխությունների համաձայն, Թբիլիսիի սակրեբուլոյի անցողիկ շենք 2,5 տոկոս էր, իսկ (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՈՂՋ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՀԱՎԱՔԵՅ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ 46,74 ՏՈԿՈՍԻ ԶԱՅՆԵՐԸ

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, հոկտեմբերի 2-ին երկրում անցկացված տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքներով, կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը ստացել է ընտրությունների մասնակիցների ամենաբարձր տոկոսի աջակցությունը:

Զայնի քանակով երկրորդ հորիզոնականը՝ 30,68 տոկոսով զբաղեցրեց «Միասնական ազգային շարժումը»: Վրաստանի նախկին վարչապետ Գիորգի Գախարիայի «Հանուն Վրաստանի» կուսակցությունը՝ 7,79 տոկոսով զբաղեցրեց երրորդ հորիզոնականը՝ առաջ անցնելով այնպիսի փոքրիշատե ժանաչուն ստացած ընտրական սուբյեկտներից, ինչպիսիք են «Լեւոն» (2,71 տոկոս),

«Եվրոպական Վրաստանը» (1,66 տոկոս), «Հայրենասերների ալյանսը» (1,46 տոկոս), «Ձուրաք Գիրչի Ջափարիձե. Ավելի շատ ազատություն» (1,44 տոկոս), «Երրորդ ուժ՝ ռազմավարությունը Ադնաշենբեկի» (1,34), Լեյբորիստական կուսակցությունը (1,38 տոկոս), «Գիրչին» (0,95 տոկոս): Նշենք, որ հոկտեմբերի 2-ին, ընդհանուր առմամբ, մասնակցեց 48 ընտրական սուբյեկտ:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ.ՄԵԼՔՈՆ ՄԱԿԱՐՅԱՆԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄՏԱՅԱՎ ԶԱՅՆԵՐԻ 82 ՏՈԿՈՍԸ



Ախալքալաքիի ընտրատարածքում մունիցիպալիտետի քաղաքապետի պաշտոնի համար ներկայացվել էր երեք թեկնածու: Կառավարող «Վրացական երազանքը» ներկայացրել էր Մելքոն Մախարյանի, «Միասնական ազգային շարժումը»՝ Մելիք Ռախայանի, իսկ «Եվրոպական Վրաստանը»՝ Արսեն Կարապետյանի թեկնածությունը: Ընտրությունների արդյունքներով՝ «Վրացական երազանքի» թեկնածուի օգտին քվեարկել է ընտրության մասնակիցների 82 տոկոսը: «Եվրոպական Վրաստանի» թեկնածուի օգտին՝ ընտրողների 10,07, իսկ «Ազգային շարժման» ներկայացուցչի օգտին՝ 7,93 տոկոսը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆԻՆՈՇՄԻՆԴԱ. ԱՆԻՎԱՐԴ ՄՈՍՈՅԱՆԸ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՆՊԱՏ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին Նինոժմինդայի քաղաքապետի պաշտոնին հավակնում էին «Վրացական երազանքի» կողմից առաջադրված Անիվարդ Մոսոյանը, «Միասնական ազգային շարժման» թեկնածու Ավակ Բոդյանն ու նախաձեռնող խմբի կողմից առաջադրված անկախ թեկնածու Սուրեն Մոսոյանը: Ընտրությունների արդյունքներով՝ Անիվարդ Մոսոյանը արժանացավ ընտրողների 82,53 տոկոսի աջակցությանը, անկախ թեկնածու Սուրեն Մոսոյանի օգտին քվեարկեց ընտրողների 12,85 տոկոսը, իսկ «Ազգայինների» թեկնածուի օգտին՝ 4,62 տոկոսը:



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱԽԱԼՑԻԽԵՆՈՒՄ, ԱՄՊԻՆՁԱՅՈՒՄ, ԾԱԼԿԱՅՈՒՄ, ՄԱՌՆԵՈՒԼԻՈՒՄ, ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅՈՒՄ, ԲՈԼՆԻՍԻՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԵՆ ԸՆՏՐՎԵԼ «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Ինչ վերաբերում է Վրաստանի հայաբնակ մյուս մունիցիպալիտետներում ընտրությունների արդյունքներին, ապա նշենք, որ ընտրությունների առաջին իսկ փուլում բոլոր հարցականները վերացվեցին:

Այսպես, Ախալցխի մունիցիպալիտետում քաղաքապետի պաշտոնին հավակնող յոթ թեկնածուների թվում՝ «Վրացական երազանքի» առաջադրած թեկնածու Իրակլի Լազարաշվիլին հավաքեց ձայների 57 տոկոսը, գրեթե 30 տոկոսով առաջ անցնելով «Ազգային շարժման» թեկնածու Դավիթ

Բալիաշվիլուց (27,01 տոկոս): Ասպինձայի մունիցիպալիտետում քաղաքապետի պաշտոնի համար պայքարող «Վրացական երազանքի» եւ «Ազգային շարժման» կողմից առաջադր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Ե

ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՍՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԴ, ՍԻՐԵԼԻ «ՎՐԱՍՏԱՆ»

Լրացավ մեր բոլորի համար քաջաժանոք ու սիրված «Վրաստան» թերթի մեկդարյա հորեյանը: Շատ կարելի է ասել եւ գրել այս 100 տարիների ընթացքում տարբեր անվանումներով լույս տեսնող «Վրաստան» թերթի արգասաբեր գործունեության մասին: Իրականում արգասաբեր, քանի որ բոլոր այդ տարիների ընթացքում թերթը հավատարմորեն ծառայեց իր գլխավոր առաքելությանը՝ լինել Վրաստանի ազգությանը հայ քաղաքացիների պատմության մասունակը: Թերթը հավատարիմ իր սկզբունքներին, նշանակալի ավանդ ներդրեց վրաց պետականության շինարարության գործում: Այս վերջին համաժամանակը առավել նկատելի դարձավ վերջին 30 տարիներին, Խորհրդային Միության փլուզման արդյունքում անկախ Վրաստանի հռչակումից հետո:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ»՝ ԻՄ ԿՅԱՆՔԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՈՒՂԵԿԻՑ

Սիրելի՛ խմբագրություն, իմ կապը թերթի հետ սկսվել է 70-ական թվականներից, երբ զավակներին տարա հայկական դպրոց ու բաժանորդագրվեցի «Սովետական Վրաստան» թերթին: Այդ օրվանից այն դարձավ իմ կյանքի անբաժանելի մասը: Երեխաներին դպրոցն ավարտելուց հետո, ամեն կիրակի օր, ես, արդեն հանգուցյալ տիկնոջս՝ Ժենյայի հետ, գնում էինք եկեղեցի, ներկա լինում պատարագին ու թերթի հերթական համարը ձեռքներին՝ տուն վերադառնում: Այսօր էլ այդ ավանդույթը չի փոխվել, անհամբեր սպասում եմ կիրակի օրվան, որ գնամ եկեղեցի ու վերցնեմ Քո նոր համարը: Ընթերցում եմ բոլոր նյութերը, տեղեկանում մեր երկրում ու համայնքում եւ աշխարհում կատարվող բոլոր նորություններին, իմանում եմ Մայր Հայրենիքի կյանքի մասին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԱՎԵԼԱՆՈՒՄ Ե 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՅ. ՄԻՆԶԵՎ 70 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻՆԸ՝ 20, ԻՍԿ 70-Ն ԱՆՅ ԱՆՁԱՆՅԸ՝ 25 ԼԱՐԻՈՎ

2022 թվականի բյուջեի նախագծի համաձայն, 2022 թվականի հունվարից, մինչեւ 70 տարեկան անձանց կենսաթոշակը կավելանա 20 լարիով, իսկ 70 տարեկանից բարձր թոշակառուներինը՝ 25 լարիով:



Ինչպես արդեն հաղորդել ենք, 2014 թվականին Վրաստանի խորհրդարանի ընդունած «Պետական կենսաթոշակի մասին» օրենքի համաձայն՝ մինչեւ 70 տարեկան անձանց կենսաթոշակը պետք է բարձրացվի վերջին 12 ամիսների միջին գնաճի մակարդակով, բայց ոչ պակաս, քան 20 լարի: Ազգային վիճակագրական ծառայության կողմից սեպտեմբերին հրապարակված տվյալների համաձայն, վերջին

12 ամիսների միջին գնաճը կազմել է 6,4 տոկոս: Հաշվի առնելով, որ այս ցուցանիշով կենսաթոշակի բարձրացումը օրենքով սահմանված նվազագույն 20 լարիից փոքր է, օրենքի համաձայն, հունվարից կենսաթոշակը կդառնա 260 լարի: Նույն օրենքի համաձայն 70 (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒ ԶԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԷԻՆ ԶԱՆՈՂՄԱՆ»



Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու ձերբակալության հարցով տարածվող, հակասող տեղեկատվության կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդես է եկել բաց նամակով:

Նամակում վարչապետը նշել է, թե ինչն է Միխեիլ Սաակաշվիլու արկածային ժամանան ծրագրի դրդապատճառը: «Տարբերակները կարող են շատ լինել: Ոմանց կարծիքով, «Միացյալ ազգային շարժման» մյուս առաջնորդների նախանձը եւ ուշադրության կենտրոնում հայտնվելու ցանկությունը: Ըստ մյուսների, Սաակաշվիլին վերադարձավ իշխանությունը տապալելու մտադրությամբ, որի հաջողու-

րակը նույնպես անտրամաբանական է: Դեռեւթեւ, ամենատրամաբանական տարբերակն այն է, որ Սաակաշվիլին Վրաստան է ժամանել ոչ թե բանտ նստելու մտադրությամբ, այլ պետական հեղաշրջման մեծ հույսով: «Ցանկանում եմ հանրությանը ասել, որ Սաակաշվիլու հեղափոխական մտադրությունները, բոլոր դեպքերում, դատապարտված էին ձախողման: Տարիներ շարունակ «Ազգային շարժումը» եւ նրա քարոզչական հեռուստաընկերությունները փորձում են «փլուզված պետության» մասին կեղծ պատկերացում հաստատել: Փաստորեն, «փլուզված վիճակի» փոխարեն, հանդիպեց կարգին կազմակերպված պետական համակարգի: Սա բացատրում է Սաակաշվիլու հոգեվիճակի արմատական փոփոխությունը բանտարկությունից առաջ եւ հետո. նա բանտ է մտել ժպիտը դեմքին եւ այժմ նրան ոչինչ չի անհանգստացնում, բանտից դուրս գալուց բացի»,- ասված է վարչապետի բաց նամակում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄՈՆԻՏԵՆԳՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Յուլի 7-8-ը, պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Մոնտենեգրոյի նախագահ Միլո Ջուկանովիչը:


2000 թվականին, Հարավսլավիայի փլուզումից հետո կազմավորվեց Սերբիայի եւ Հեռնոգորիայի Հանրապետությունը, թեև 2003թ. անցկացված հանրաքվեի արդյունքներով, Հեռնոգորիան (սլավոներեն՝ սեւ սար, իսկ անգլերեն՝ Մոնտենեգրո), հռչակեց անկախություն, որի սահմանակից երկրներն են Խորվաթիան, Բոսնիա-Հերցեգովինան, Սերբիան եւ Ալբանիան:

Մոնտենեգրոյի նախագահը, այցի շրջանակներում, հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու հետ: Վրաստան պաշտոնական այցի ընթացքում Միլո Ջուկանովիչը հարգանքի տուրք մատուցեց Վրաստանի միասնու-

թյան համար պայքարում զոհված հերոսների հուշահամալիրին եւ գրառում կատարեց պատվո մատյանում: Մոնտենեգրոյի նախագահի պաշտոնական այցի շրջանակներում ստորագվեց «Վրաստանի կառավարության եւ Մոնտենեգրոյի կառա-



Վարչապետի միջեւ՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիրը:



ԱՐԴԵՍ ԴԱՏԱՊՈՒՏՅԱՆԸ՝ ՆՈՐԲԵՆԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴՊՈՆԵԿԻՐ

Ֆիզիոլոգիայի եւ բժշկության բնագավառում 2021 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիրներ են դարձել ամերիկացի գիտնականներ Դեյվիդ Ջուլիոսը եւ Արդեմ Պատապոթյանը: Գիտնականները գտել են այն հարցի պատասխանը, թե ինչպես են նախաձեռնվում նյարդային ազդակները, որպեսզի հնարավոր լինի ընկալել ջերմաստիճանն ու ճնշումը:

Պատապոթյանը սովորել է Բեյրութի ամերիկյան համալսարանում, Կալիֆոռնիայի համալսարանում նա ստացել է բջջային կենսաբանության եւ զարգացման կենսաբանության բակալավրի աստիճան եւ փիլիսոփայության դոկտորի աստիճան: Պատապոթյանը 2014 թվականից աշխատել է Հովարդ Հյուզի բժշկական ինստիտուտում՝ որպես հետազոտող:

ԻՐԱՆԸ ՓԱԿԵԼ Է ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԱՂՐԵՋԱՆԻ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾԲԸ

Իրանը փակել է Աղրբեջանի օդային տարածքը Նախիջեւանի ուղղությամբ ռազմական առաքումների համար: Այս մասին Իրանը պաշտոնապես տեղեկացրել է Աղրբեջանին: «Աղրբեջանին հարվածելու Իրանի հաջորդ փորձը չի անդրադառնա Նախիջեւանում զորամասերի մատակարարման վրա: Աղրբեջանն այս երթուղին օգտագործում է շատ փոքր չափաբաժիններով եւ նախընտրում փոխադրվել այլ երթուղիներով»,- արդրեջանական ՋԼՄ-ներին ասել է կառավարության աղբյուրը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ՝ ԲԱՑԱՌԻԿ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի չորրորդ այցը Վրաստան վերահաստատում է Վրաստանին ՆԱՏՕ-ի անասան աջակցությունը:

- ՆԱՏՕ-ն եւ Վրաստանը յուրահատուկ գործընկերություն ունեն, որը ժամանակի ընթացքում է՛լ ավելի է ամրապնդվում,- հայտարարեց ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի նախագահ, ծովակալ Ռոբ Բաուերը՝ Վրաստանի վարչապետ

Իրակլի Դարիբաշվիլու հետ հանդիպմանը, որի մեկնարկին վարչապետը շնորհավորեց ծովակալ Բաուերին՝ ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի նախագահ նշանակվելու առիթով եւ նշեց, որ ՆԱՏՕ-ի բարձրագույն ռազմական գերատեսչության այ-

ցը Վրաստան վկայում է Վրաստանի ՆԱՏՕ-ին անդամակցությանը, երկրի անկախությանը, տարածքային ամբողջականությանը եւ ինքնիշխանությանը ուժեղ աջակցության մասին: Վարչապետը նշեց, որ Վրաստանը հավատարիմ է եվրոպական եւ եվրատլանտյան իմունեթյունը: Խոսքը վերաբերեց պաշտպանական կարողությունների եւ դաշինքի հետ

համատեղելիության ամրապնդման նպատակով Վրաստանում պաշտպանական հավակնոտ բարեփոխումների իրականացմանը, միջազգային գործընկերների հետ երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով համագործակցությանը եւ ՆԱՏՕ-ի հետ քաղաքական ու գործնական համագործակցության մեխանիզմների արդյունավետ օգտագործմանը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՆԻԿԱ ՄԵԼԻԱՅԻ ՊԱՅԱՆՋԸ ԲԱՎԱՐԱՐՎԵՑ. ՆՐԱ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑԻՆ

Յուլի 5-ին, Վրաստանի խորհրդարանի լիազույնար նիստում, քննարկվեց «Միասնական ազգային շարժման» կողմից խորհրդարանի համամասնական պատգամավոր Նիկա Մելիայի՝ պատգամավորական լիազորությունների դադարեցման վերաբերյալ պահանջը, եւ բավարարվեց այն:

Խորհրդարանը դադարեցրեց «Ազգային շարժում» կուսակցության նախագահ Նիկանո Մելիայի պատգամավորական մանդատը: Լիազույնար նիստում որոշմանն աջակցեց 79 պատգամավոր, դեմ՝ ոչ ոք չգնաց:

Հիշեցնենք, որ դեռեւս Նիկա Մելիան հուլիսի 29-ին դիմել էր խորհրդարանին պատգամավորական մանդատը դադարեցնելու պահանջով: Հատկանշական է մի հանգամանք. Քանի որ Նիկա Մելիան տասներորդ գու-

մարման խորհրդարանի պատգամավոր դարձավ համամասնական ցուցակով, «Միացյալ ազգային» շարժումը չի կարողանա խորհրդարանում Նիկա Մելիային մեկ այլ անձով փոխարինել եւ կորցնում է պատգամավորական մանդատը: Խորհրդարանը չի ճանաչում նրան փոխարինելու իրավասությունը, քանի որ «Ազգային շարժման» պահանջով կուսակցության ընտրողների ցուցակն ամբողջությամբ չէրյալ է հայտարարվել:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ԶԵՐԲԱԿԱԿԱԿԱԾ Է

Յուլի 1-ի երեկոյան, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, հատուկ հրավիրված մամուլ ասուլիսում, հայտարարեց, որ Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլին ձերբակալված է:

- Ուզում եմ հանրությանը տեղեկացնել, որ Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլին ձերբակալված է: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ: Մեր իրավապահներն ամենաբարձր մակարդակով իրականացրին հետախուզության մեջ գտնվող Միխեիլ Սաակաշվիլու ձերբակալությունը,- հայտարարեց վարչապետը: Նույն օրը Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակեց նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն բերման ենթարկելու կարգերը: Տեսանյութում Սաակաշվիլին ձեռնաշղթաներով է, ուստիկանների ուղեկցությամբ, ժպտում է: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 1-ին, ողջ

օրվա ընթացքում լայնորեն քննարկվում էր Միխեիլ Սաակաշվիլու՝ Վրաստանում լինել-չլինելու հարցը: Վաղ առավոտյան նա գրել էր, թե Բաթումում է, ՆԳՆ-ը եւ իշխանությունը հերքել էին՝ ասելով, թե նա իրականում չի լքել Ուկրաինան, Վրաստանի պետական սահմանը չի հատել եւ հատելու դեպքում կձերբակալվի: Իսկ նախօրեին Սաակաշվիլին Թբիլիսի տոմսի լուսանկարն էր հրապարակել՝ հոկտեմբերի 2-ի համար: Լրատվամիջոցները գրում են, որ նախկին նախագահը բերման է ենթարկվել Թբիլիսիի Գլդանի-Նաձալադեի թաղամասի վարձակալած բնակարանից: Ներկա պա-

հին գտնվում է Ռուսթավի քրեակատարողական հիմնարկում: Վրաստանի հանրային պաշտպան Նիկո Լոմջարիան այցելել է նրան: Տեղեկություն կա, որ Վրաստանում Ուկրաինայի դեսպան Իգոր Դոլգովը կանչվել է Ներքին գործերի նախարարություն: Յուլի 3-ին Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն առաջադրվել է մեղադրանք՝ սահմանի ապօրինի հատման փաստի կապակցությամբ: Յուլի 1-ին ներքին գործերի նախարարությունը հետաքննություն է սկսել



Սաակաշվիլու կողմից՝ սահմանի անօրինական հատման վերաբերյալ: Հետաքննությունն անցկացվում է Վրաստանի քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի հատկանիշներով: ՍԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱՅՈՒՆԱԿԱՆ ԱՎԵԼՆՈՒՄ Է

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՑ. ՄԻՆՉԵՎ 70 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻՆԸ՝ 20, ԻՍԿ 70-Ն ԱՆՅՈՒՆՆԵՐԻՆԸ՝ 25 ԼԱՐԻՈՎ

(Այկաբը՝ 1-ին էջում)

Եւ բարձր տարիքի մարդկանց կենսաթոշակները, պետք է բարձրացվեն վերջին 12 ամիսների եւ վերջին 6 եռամսյակների ՅՆԱ-ի իրական աճի միջին թվաբանական հաշվի 80 տոկոսով:


Հաշվի առնելով, որ կենսաթոշակի բարձրացումը համապատասխան բանաձեւով պակաս է օրենքով սահմանված նվազագույն 25 լարիից, այս դեպքում նույնպես, օրենքի համաձայն, կենսաթոշակը կբարձրանա 25 լարիով եւ կդառնա 300 լարի: Ընդհանուր առմամբ, կենսաթոշակի տրամադրման համար բյուջեում գրվել է 2 885 մլրդ լարի:

ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿԱՎԵԼԱՆԱ 100 ԼԱՐԻՈՎ

2022 թվականի պետական բյուջեի նախնական նախագծի համաձայն կարգավիճակ ունեցող ուսուցիչների աշխատավարձը 2022 թվականի հունվարից կբարձրանա 100 լարիով (մոտ՝ 32 դոլար), նախագծի համար կտրամադրվեն:

Վի 79,4 մլն լարի: Ըստ պետական բյուջեի նախագծի, հանրակրթական դպրոցներին հատկացվող գումարը եւս ավելացվել է 79.4 մլն լարիով եւ կազմում է 975.0 մլն լարի: Ինչ վերաբերում է կրթության եւ գիտության նախարարության ֆինանսավորմանը, ապա, պետական բյուջեի նախագծի համաձայն, 2022 թվականին այն կկազմի 1 637.5 մլն լարի, ինչը 112.7 մլն լարիով ավելի է 2021 թվականին հատկացված գումարից:

Ըստ պետական բյուջեի նախագծի, հանրակրթական դպրոցներին հատկացվող գումարը եւս ավելացվել է 79.4 մլն լարիով եւ կազմում է 975.0 մլն լարի: Ինչ վերաբերում է կրթության եւ գիտության նախարարության ֆինանսավորմանը, ապա, պետական բյուջեի նախագծի համաձայն, 2022 թվականին այն կկազմի 1 637.5 մլն լարի, ինչը 112.7 մլն լարիով ավելի է 2021 թվականին հատկացված գումարից:



ԱՆՑԿԱՑԿԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ ՀԱՍՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի ներքին գործերի նախարարության առափնյա պահպանության եւ ՆԱՏՕ-ի ռազմածովային ստորաբաժանման նավերը, Սեւ ծովում անցկացրին համատեղ ռազմածովային զորավարություններ: Այլանսի կողմից զորավարություններին մասնակցում էին Իսպանիայի, Ռուսիայի, Բուլղարիայի, Թուրքիայի եւ Իտալիայի ռազմածովային զորքերը:

Զորավարությունների նպատակն էր բարձրացնել Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի նավատորմի փոխգործունակությունը եւ ամրապնդել մեր երկրի պաշտպանունակությունը:

ԱՆՑԿԱՑԿԵՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԱԿՈՂՄ ՄԻՆԻՍՏԵՐԻԱԼ

Վրաստանում ավարտվել է Ադրբեջան-Թուրքիա-Վրաստան պաշտպանության եռակողմ միջխտերիակը:

Տարածաշրջանային անվտանգություն, պաշտպանական համագործակցության ուղղություններ եւ պաշտպանության ծրագրեր են քննարկել Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի պաշտպանության նախարարները՝ Կախեթիում անցկացրած եռակողմ հանդիպմանը:

Միջխտերիակի ավարտին բոլոր երեք երկրների պաշտպանության նախարարները ստորագրել են համագործակցության եռակողմ փաստաթուղթ:

ԱՊՐԱՎԿՎԵԼ Է ԶԵՆՔԻ ԽՄԲԱՔԱՆԱԿ

Վրաստանի Իմերեթի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում, իրականացված հետախուզա-հետաքննչական միջոցառումների արդյունքում, ոստիկանությունն առգրավել է հրաձգային զենքի մի քանի միավոր եւ զինամթերք:

Հրաձգային զենքի եւ զինամթերքի անօրինական ձեռքբերման եւ պահպանման մեղադրանքով ձերբակալվել է Վրաստանի երկու քաղաքացի: Հանցագործությունները պատժվում են չորսից մինչեւ յոթ տարի ժամկետով ազատազրկմամբ:

ՊԵՏՐՅՈՒՋԵՆ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏՄԱՏՈՒԹՅԱՄԲ, ԵԿԱՄՈՒՑՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏՐՅՈՒՋԵՆ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է

Խորհրդարան է ներկայացվել 2022 թվականի պետական բյուջեի նախագիծը: Փաստաթղթի համաձայն, հաջորդ տարվա պետական բյուջեի ընդհանուր եկամուտները, նախորդ տարվա համեմատ, աճել են 750.9 մլն լարիով եւ կազմել 18.68 մլրդ լարի:

Ինչ վերաբերում է վճարումներին, ապա կառավարությունը մտադիր է 2022 թվականին ծախսել 18.44 մլրդ լարի, ինչը 1.05 մլրդ լարիով ավելի է՝ 2021 թվականի հաստատված ծրագրից:

2022 թվականի Վրաստանի պետական բյուջեն, ընթացիկ տարվա բյուջեի համեմատ, ավելի քան 1 մլրդ լարիով կրճատվել է, ավելի ճշգրիտ՝ 1 055 470 800 լարիով:

Պետբյուջեի նախագծի համաձայն, ծավալը 18 443 276 00 լարի է: Այն պայմանավորված է 2 հիմնական գործոնով, մասնավորապես, 2022 թվականին համավարակի հետ կապված ծախսերը զգալիորեն կկրճատվեն (850.0 մլն լարիով), ինչպես նաեւ կկրճատվեն եվրապարտատոմսերի համար հատկացումները (1713.2 մլն լարի):

2022 թվականի պետական բյուջեի ծախսային մասում առկա են լրացուցիչ ծախսեր՝ ուղղված կենսաթոշակի ինդեքսավորմանը եւ ուսուցիչների աշխատավարձերի բարձրացմանը: Նախատեսվում է նաեւ կորոնավիրուսի համավարակի հետ կապված առողջապահության ոլորտի ծախսը ավելացնել 500.0 մլն լարիի չափով:

Հատկանշական է, որ 2021 թվականի բյուջեն կազմել է 19 498 746 800 լարի:



ԿՐԹԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ «1+4» ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՏԱԺՎՈՐՈՒՄԸ

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության պետնախարարի աշխատակազմը հայտարարում է «Վրաց լեզվի նախապատրաստական ծրագրից» («1+4» ծրագիր) օգտվող անձանց համար ստաժավորման ծրագրի հերթական փուլի մասին:

Ստաժավորման ծրագրի նպատակն է՝ Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին ծանոթացնել քաղաքացիական ծառայության գործունեության առանձնահատկություններին, զարգացնել նրանց մասնագիտական հմտությունները, նպաստել նրանց ներգրավվածությանը եւ քաղաքացիական ինտեգրման գործընթացին:

Ծրագրի շրջանակներում, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն կունենան մրցույթային հիմունքներով մասնակցել ստաժավորման գործընթացին: Հատուկ ստեղծված հանձնաժողովի կողմից ընտրված մասնակիցները 1-ից մինչեւ 6 ամսվա ստաժավորում կանցնեն պետական գերատեսչություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում եւ իրավաբանական անձանց մոտ:

Ներկրում առկա համաճարակային իրավիճակի պայմաններում ստաժավորման ծրագրին մասնակցելու պատրաստ պետական գերատեսչությունների ու կառուցվածքային ստորաբաժանումների ցանկին կարող էք ծանոթանալ Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության պետնախարարի աշխատակազմի պաշտոնական կայք-էջում www.smr.gov.ge:

Ծրագրին մասնակցել ցանկացողները, մինչեւ հոկտեմբերի 17-ը պետք է լրացնեն հայտը:

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱ

ՍԿՍՎԵԼ Է ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՆՈՐ ԱԼԻՔԸ

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄՆԱՅՈՒՄ ԵՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆՇԱՆՆԵՐ, ԻՆՉ Է ՄՊԱՍՎՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին ժամանակներում նավթամթերքների գների ավելացումը եվրոպայում լուրջ իրարանցում է առաջացրել: Նավթի մեկ բարելի գինն արդեն գերազանցել է 80 դոլարի մակարդակը, ինչն էլ ավելի է բարդացնում նավթամթերք ներկրող երկրների տնտեսական վիճակը:

Վրաստանի նավթամթերքներ ներկրողների միության ղեկավար Վանո Թվարելաշվիլու խոսքով, նավթամթերքի թանկացումը պայմանավորված է մի քանի գործոններով:

- Համավարակով պայմանավորված տնտեսական անկումը հարթահարելու պայմաններում, նավթամթերքի պահանջարկն ավելացել է, իսկ մատակարարումը, ընդհակառակը՝ նվազել է: Այսինքն, պահանջարկի եւ ներկայացման միջեւ առկա տարբերությունը թանկացման գլխավոր պատճառն է: Այսօրվա դրությամբ, վառելանյութի գինը, 2018 թվականի համեմատ, հասել է ամենաբարձր ցուցանիշի: Համաշխարհային մակարդակով նավթամթերքների խոշորագույն սպառող երկրներն արդեն շրջանառության մեջ են դնում իրենց ռազմավարական պաշարները, հայտարարեց Վանո Թվարելաշվիլին՝ հավելելով, որ համաշխարհային շուկայում մեկ բարել նավթամթերքի 80 դոլարանոց արժեքի սահմանումը լուրջ

հիմնախնդիրներ է ստեղծում ներկրող երկրների, այդ թվում՝ Վրաստանի համար:

- Արդեն իսկ տեղական շուկայում բենզինի եւ դիզելային վառելանյութի գները նշանակալիորեն գերազանցել են համավարակի պայմաններում բենզինի համար սահմանված 2.5 լարիի շեմը եւ մոտեցել է 3 լարիի նշանագծին:

Ինչ վերաբերում է վերջին ժամանակահատվածին, ապա նկատվել է որոշակի կայունություն: Մասնավորապես, սեպտեմբերի 1-ից մինչեւ այսօր, բենզինի մեկ տոննայի արժեքն ավելացել է ընդամենը 7 դոլարով, իսկ դիզելային վառելանյութինը՝ 72 դոլարով, այսինքն՝ աճը կազմել է 10-12 տոկոս:

Ֆինանսիստ Պաստա Բայրախտարը բացառում է, որ Վրաստանում կարող է լինել վառելանյութի հետ կապված ճգնաժամ: Նրա խոսքով, կտրուկ գնաճ չի լինի: «Նավթամթերքի գլոբալ շուկայում, մոտ մեկ ամիս առաջ,

վավերացվեց գների նշանակալի նվազում: Այդ ժամանակահատվածում էլ մեզանում վավերացվեց լարիի կուրսի որոշակի կայունացում: Չնայած դրան, բրենտ բենզալցման կայաններում այդ հանգամանքը գրեթե չնկատվեց, թեպետ նավթամթերքների ներկրումն ինքնուրույն իրականացնող ընկերությունների բենզալցման կայաններում դա արտացոլվեց եւ, բրենտային կայանների համեմատ, դրանցում մեկ լիտրի արժեքի տատանումը կազմեց 30-35 թեթրի, ինչը բավական մեծ գումար է, նշեց ֆինանսիստը եւ հավելեց, այդ հարցը ենթակա է մրցակցային գործակալության քննարկմանը, որն ինչ-ինչ պատճառներով ձգձգում է դրա իրականացումը:

Հիշեցնենք, որ համաշխարհային շուկայում նավթամթերքի գնաճը շարունակվում է: Բրենտի մակնիշի նավթամթերքի արժեքը 2018 թվականից հետո առաջին անգամ գերազանցեց 80 դոլարի մակարդակը, իսկ դա նշանակում է, որ համաշխարհային շուկայում պահանջարկը գերազանցում է առաջարկին: Նման պայմաններում բացառված չէ, որ 2021 թվականի վերջերին նավթի գինը 80-ից հասնի 90 դոլարի:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

44 ՄՈՒՆԻՅՈՒՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՅԻՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ, ԻՍԿ 20-ՈՒՄ ԿԱՆՅԿԱՅՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մյուս մունիցիպալիտետների համար՝ 3 տոկոս:

Հոկտեմբերի 3-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սկսեց հրապարակել անցկացված ընտրությունների արդյունքները: ԿԸՀ-ի նախնական տվյալներով, 64 մունիցիպալիտետներից 44-ում քաղաքապետի ընտրություններում հաղթել են «Վրացական երազանքի» թեկնածուները: Այս մունիցիպալիտետներում կառավարող կուսակցության թեկնածուները հաղթա-

հարել են 50 տոկոսի շեմը:

Քաղաքապետի ընտրությունների առաջին փուլում հաղթողների թվում են Ախալքալաքի մունիցիպալիտետում «Վրացական երազանքի» քաղաքապետի թեկնածու Մելքոն Մակարյանը եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Անիվարդ Մոսոյանը (ստորեւ ներկայացնում ենք Ախալքալաքի եւ Նինոծմինդայի ընտրատարածքներում, ինչպես նաեւ հայաբնակ մյուս մունիցիպալիտետներում ընտրությունների արդյունքները):

ԹԲԻԼԻՍԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ 50 ՄԱՆԴԱՏՆԵՐԻՑ 28-Ը ՍՏԱՑԱՎ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ», 13-Ը՝ «ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ», ԵՎՍ 8-Ը՝ ՎԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ-ի հրապարակած տվյալների համաձայն, Թբիլիսիի ընտրատարածքի 621 տեղամասերի տվյալները հաշվելուց հետո, ընտրությունների նախնական արդյունքներով, Թբիլիսիի սակրեբուլոյում տեղ կզբաղեցնեն 2,5 տոկոսի շեմը հաղթահարած վեց քաղաքական կուսակցություններ. «Միասնական ազգային շարժում»՝ 107 097 ձայն (28,09 տոկոս), «Լեյո»՝ 13 470 ձայն (3,53 տոկոս) «Գախարիա. Հանուն Վրաստանի»՝ 33 434 ձայն (8,77 տոկոս), «Վրացական երազանք» ժողովրդավարական Վրաստան»՝ 154 314 ձայն (40,47 տոկոս), «Ձուրաբ Գիրջի Ջափարիձե. ավելի շատ ազատություն»՝ 12 335 ձայն (3,24 տոկոս) եւ «Անա Դոլիձե. Հանուն ժողովրդի»՝ 9 823 ձայն (2,58 տոկոս):



Ինչ վերաբերում է սակրեբուլոյի մանդատներին, ապա «Վրացական երազանքը» կստանա 28 մանդատ (19 համամասնական եւ ինը՝ մեծամասնական), «Ազգային շարժումը»՝ 13 տեղ (համամասնական), «Գախարիա. Հանուն Վրաստանի»՝ չորս տեղ (համամասնական), «Լեյո»՝ երկու մանդատ (համամասնական), «Ձուրաբ Գիրջի Ջափարիձե. ավելի շատ ազատություն»՝ մեկ մանդատ (համամասնական) եւ «Անա Դոլիձե. Հանուն ժողովրդի»՝ մեկ ման-

դատ (համամասնական): Իսանիի ընտրատարածքից սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր է ընտրվել «Երազանքի» թեկնածու Կախա Լաբուչիձե:

Նշենք, որ մայրաքաղաքի Սաբուրթալոյի ընտրատարածքում կանցկացվի ընտրությունների երկրորդ փուլը՝ «Վրացական երազանքի» թեկնածու Ավթանդիլ Ցինցաձեն ունի 38,76 տոկոս, իսկ Բորիս Կուրուան «Գիրջի» ավելի շատ ազատություն» կուսակցության թեկնածուն՝ 14,29 տոկոս:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄԵԼԵՈՆ ՄԱԿԱՐՅԱՆԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՏԱՑԱՎ ԶԱՅՆԵՐԻ 82 ՏՈԿՈՍԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչ վերաբերում է Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամների ընտրությանը, ապա ընտրատարածքի 14 մեծամասնական տեղամասերում համոզիչ հաղթանակ են տոնել «Վրացական երազանքի» թեկնածուները: Սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորի մանդատների են արժանացել Կարապետ Պոլոյանը (ստացել է ձայների 78,52 տոկոս), Հակոբ Չախմախչյանը (85,01 տոկոս), Սիփան Շիպակցյանը (71,95 տոկոս), Գրիգոր Կարաբեկյանը (75,79 տոկոս), Նաիրի Մելտոնյանը (75,5 տոկոս), Ալբերտ Մանուշյանը (74,89 տոկոս), Գեմադի Էլիզարյանը (85,08 տոկոս), Արամայիս Զաքարյանը (92,05 տո-

կոս), Աշոտ Էդունյանը (79,51 տոկոս), Համլետ Մովսիսյանը (89,79 տոկոս), Վաղարշակ Առաքելյանը (75,95 տոկոս), Գուրամ Օքրոսձեն (76,58 տոկոս), Հրաչյա Մովսիսյանը (63,24 տոկոս), Նվեր Մոսոյանը (86,46 տոկոս):

Մեծամասնական պատգամավորներից բացի, սակրեբուլոյում կներկայացվեն 3 տոկոսի ընտրաշեմը հաղթահարած կուսակցություններից ներկայացված համամասնական պատգամավորները: Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյում իրենց ներկայացուցիչները կունենան «Եվրոպական Վրաստան» (5,51 տոկոս), «Միասնական ազգային շարժում» (7,94 տոկոս), «Լեյո» (3,48 տոկոս) եւ «Վրացական երազանք» (76,27 տոկոս) կուսակցությունները:

ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻ ԱՆԻՎԱՐԴ ՄՈՍՈՅԱՆԸ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՆՊԱՏ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՎՐԱՍԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նինոծմինդայի մունիցիպալիտետի 10 մեծամասնական ընտրատարածքներում եւս հաղթանակը տոնեցին «Վրացական երազանքի» ներկայացուցիչները: Այսպես, մեծամասնականների համար սահմանված 40 տոկոսի արգելազիծը հաղթահարել են «Երազանքի» ներկայացուցիչներ՝ Վաղինակ Արզումանյանը (76,66 տոկոս), Ալբերտ Մարկոսյանը (71,97 տոկոս), Գեորգ Իսոյանը (89,2 տոկոս), Գեորգ Չապանյանը (76,89 տոկոս), Վալերի Բեգոյանը (60,78 տոկոս), Սերգեյ Ադունյանը (88,39

տոկոս), Շիրազ Խոդիկյանը (97,84 տոկոս), Գրիգոր Շամիլյանը (73,38 տոկոս), Առնակ Հախվերդյանը (100 տոկոս), Սամվել Դարբինյանը (100 տոկոս):

Համամասնական ընտրակարգով Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի իրենց ներկայացուցիչները կունենան 3 տոկոսի ընտրաշեմը հաղթահարած «Եվրոպական Վրաստան» (3,25 տոկոս), «Միասնական ազգային շարժում» (5,52 տոկոս), «Հանուն Վրաստանի» (4,84 տոկոս) եւ «Վրացական երազանք» (84,03 տոկոս) կուսակցությունները:

ԱԽԱԼՑԻԽԵՌԻՄ, ԱՄՊԻՆՁԱՅՈՒՄ, ԾԱԿԱՅՈՒՄ, ՄԱՌՆԵՌՈՒԼԻՈՒՄ, ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅՈՒՄ, ԲՈԼՆԻՍԻՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԵՆ ԸՆՏՐՎԵԼ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ված Ռոստոմ Մազարաբվելիձեի եւ Գիորգի Գիորգաձեի մրցապայքարն ավարտվեց առաջինի հաղթանակով, ձայների՝ 68,23 եւ 31,77 տոկոսային հարաբերությամբ:

Ծալկայի մունիցիպալիտետում քաղաքապետի պաշտոնին հավակնող չորս թեկնածուների («Վրացական երազանքից»՝ Իլիա Սաբաձե, «Ազգային շարժումից»՝ Ռուսլան Խուցիշվիլի, «Օրենք եւ արդարություն» կուսակցությունից՝ Էմզարի Դիմիտրաձե եւ անկախ թեկնածու Օդիսեյ Կեսիլ) պայքարը հիմնականում ծավալվեց Իլիա Սաբաձեի ու Ռուսլան Խուցիշվիլու միջև: Իլիա Սաբաձեի օգտին քվեարկեց ընտ-

րողների 55,86 տոկոսը, իսկ 23,61 տոկոսը գերադասեց Ռուսլան Խուցիշվիլուն:

Մառնեուլիի մունիցիպալիտետում քաղաքապետի պաշտոնին հավակնում էին կառավարող «Վրացական երազանք» կուսակցության թեկնածու Կենան Օմարովը, «Ազգային շարժման» թեկնածու Էլդար Մուսաբաջայեն ու «Եվրոպական Վրաստանի» ներկայացուցիչ Ալմանդե Իմանուլիեբը: Այստեղ եւս 68,01 տոկոսով հաղթանակը տոնեց «Վրացական երազանքի» թեկնածուն, մրցակիցներն իրենց ակտիվում կարողացան գրանցել ընտրողների ձայների, համապատասխանաբար, 28,11 եւ 3,88 տոկոս:

Թեթրիծղարոյի մունիցիպալիտետում եւս քաղաքապետի պաշտոնին հավակնում էին «Վրացական

երազանքի», «Միասնական ազգային շարժման» եւ «Եվրոպական Վրաստանի» թեկնածուներ Գիորգի Ծիկլաուրին, Վանո Մաղալաշվիլին եւ Նինո Դավիթաշվիլին: Ձայների 65,16 տոկոսով առաջին տեղը զբաղեցրեց Գիորգի Ծիկլաուրին, Վանո Մաղալաշվիլին ու Նինո Դավիթաշվիլին, համապատասխանաբար, հավաքեցին ձայների 30,61 եւ 4,23 տոկոսը:

Բուլնիսիի մունիցիպալիտետում քաղաքապետի պաշտոնի համար պայքարը ծավալվեց «Վրացական երազանքի» թեկնածու Դավիթ Շերազադիշվիլու եւ «Ազգային շարժման» ներկայացուցիչ Վախթանգ Չաքելիշվիլու միջև: 73,06 եւ 26,44 տոկոսային հարաբերակցությամբ հաղթեց «Վրացական երազանքի» ներկայացուցիչը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ ԴՐԱՆՔ ԿԱՆՅԿԱՅՎԵՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՆՔ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՎ 20 ՄՈՒՆԻՅՈՒՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ

Վրաստանում գործող ընտրական օրենսդրությամբ, եթե ընտրությունների առաջին փուլում մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածուն չի հավաքել ընտրությունների մասնակից ընտրողների ձայների 50 եւ ավելի տոկոս, ապա այդ ընտրատարածքում նշանակվում է ընտրությունների երկրորդ փուլ, որին մասնակցում են առաջին փուլի արդյունքներով առաջին երկու տեղերը զբաղեցրած թեկնածուները:

Հոկտեմբերի 2-ին անցկացված ընտրությունների արդյունքներով՝ ընտրությունների երկրորդ փուլ կանցկացվի հինգ քաղաքներում (Թբիլիսիում, Ռուսթավիում, Բաթումիում, Քուբայիսում, Փոթիում) եւ 20 մունիցիպալիտետներում:

Հատկանշական է, որ բոլոր մունիցիպալիտետներում (բացառությամբ՝ Օզուրգեթի, Թիանեթի եւ Ցագերիի, որտեղ առաջինում «Երազանքի» ներ-

կայացուցչին հակադրվում է անկախ թեկնածուն, իսկ երկրորդ-երրորդում՝ «Հանուն Վրաստանի» կուսակցության ներկայացուցիչը), կառավարող թիմի առաջադրած թեկնածուների հետ միասին, ընտրությունների երկրորդ փուլ են անցել «Միասնական ազգային շարժման» կողմից առաջադրած թեկնածուները:

Այսպես, Թբիլիսիում քաղաքապետի պաշտոնի համար երկրորդ փուլում

կմրցեն «Վրացական երազանքի» թեկնածու Կախա Կալաձեն (առաջին փուլում հավաքել էր ձայների 45,06 տոկոս) եւ, «Ազգային շարժման» թեկնածու Նիկաճոր Մելիան (33,95 տոկոս): Ռուսթավիում, որտեղ «Վրացական երազանքի» թեկնածու Նինո Լացաբիձեն (44,92 տոկոս) եւ «Ազգային շարժման» թեկնածու Դավիթ Կիրկիտաձեն (43,81 տոկոս), Քուբայիսում, որտեղ «Ազգային շարժման» թեկնածու Խատիա Դեկանոձեն (43,84 տոկոս) եւ «Վրացական երազանքի» թեկնածու Իոսեբ Խախալեիշվիլին (41,53 տոկոս), Փոթիում «Վրացական երազանքի» թեկնածու Բեքա Վաճարաձեն (47,58 տոկոս) եւ «Միասնական ազգային շարժման» թեկնա-

ծու Գիորգի Ուզուլալան (37,73 տոկոս), Բաթումիում «Ազգային շարժման» թեկնածու Գիորգի Կիրթաձեն (42,6 տոկոս) եւ իշխող կուսակցության թեկնածու Արշիլ Չիքովանին (41,07 տոկոս):

Ընտրությունների երկրորդ փուլ կանցկացվի նաեւ Թելավիի, Թիանեթիի, Քարելիի, Խաշուրիի, Ցագերիի, Բաղդաթիի, Ծղալտուրոյի, Օզուրգեթիի, Սենակիի, Մարտվիլիի, Խոթիի, Ջուզգիդիի, Ծալենցիխայի, Չխորոզուլի մունիցիպալիտետներում:

Գործող օրենսդրության համաձայն, ընտրությունների երկրորդ փուլ կանցկացվի հոկտեմբերի 30-ին:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԴՈՂՈՍՅԱՆԸ